



### 3. ՓՈՒԽԼԻ ԲԱԲԻ ԽԵՔԾԱԹ

Կելնի իրի, կնիկմ: Էտա իրիկ շատ թանձրնու կելնի, կքյաքյի կնստի ինե: Կնիկ կէրթան տրկցի տում կասի. - Ինչ՞իս անեմ, իմ իրիկ շատ թանձրնու ի, չի պնանե, չի տնտե:

Տրկցի կնիյ կասի. - Կնն՛, ծեր տնեմ եղ, անուր թխի, տուր իրկանղ, ասա՛ ես կննցի տրկցի տում, զի պնդարն տվին, տյուն էլ կնն ուզի:

Կնիկն ի կտոնի եղ, անուր, կէրթան տրկցի տում պաղարն կթխի: Կտոնի կպիրի ուր իրկան կասի. - Փոխի բաբա՛, կտիսնա՞ս էսա պտղարնեղ տվին զի, էլի կնն քե էլ տամ:

Կանի. - Հալա՛, Ֆալա՛:

Չուզե խաբար տալ բիլս: Զոռով, թե խաթորով կնիկ Փոխի բաբին, քյաքյի փոսից կխանի տյուս, կտանի փողնի տոնից կխանի տյուս, տյուտ կզանի վերեմ, կասի. - Խորեմ՛ քե, քեզնից էլ զեռով պոծա, էլ տյուտ կպանն՞մ վեր քե:

Փոխի բաբեն կասի. - Կնի՛յկ, շա՛նմ, զո՛ղմ, տյուտ պնց, խեղճ եմ, մեխքլ եմ, ես դի՞ր էրթան:

Կասի. - Չէ՛, խորեմ քե, կնն, դի՞ր կուզես էնտեղ կնա:

Փոխի բաբեն փեղր փեղշման կիմի ճանձրնա: Օատ կէրթան, քիչ կէրթան, կէրթան՝ սարիմ մեչ կփորի, քյաքյի կնստի: Կտիսնա, որ մխշուն օձ կփախի, սև օձ կլնորի իտե:

Սև օձ կուզյն կասի. - Իսան օղի՛, էսա տեղից մխշուն օձմ փախալ, տյու տեսա՞ր:

Փոխի բաբեն կասի. - Հալա՛, Ֆալա՛:

Նխշուն-օձ կասի. - Որ տյու զիկ ինորից նզատիցիր, ուզի քո ուլածն՝ տամ:

Կասի. - Հալա՛, Ֆալա՛:

Նխշուն օձ կասի. - Որ կանոթանաս, ասա՛ «Իլանըն Ֆիրիմաթի, ալլաճըն քյարամաթի»՝ ղստեղ մեչ Ֆատ սեղանմ պատրաստվի ես խաց ուտեմ:

Օձն ղսճն կասի, կթոնի կէրթան:

Փոխի բաբեն շատ կմնա մեչ ուր փոսին, կանոթնա, կասի, կայնե ես մե Բա էն օձի խնքնրն անեմ խեճք:

\* «Օձի ողորմությունը, աստծո շնորհքը» (թուրք.):

Կասի՝ իլանըն ճիրիմանթի, ալլահըն քյանրանմանթի, ըստեղ սեղանմ պատրաստվի ես իոսց ուտեմ. էնգյանիս ինե սեղան կպատրաստվի, Փոխի բարեն խաց կուտի: Էտասկնա ճմեն օր սեղան կպատրաստվի, Փոխի բարեն խաց կուտի: Կիշեր, ցերեկ էտա քրաքի փոսի մեչ կմստի:

Ավուր մեկ թակավորու ախչիկ խետ ուր խալաեղներաց կուգյան էն սար կֆոս: Կուգյան Փոխի բարու մոտ, վերեն կծծղա, վերեն ուր կծծղա, Փոխի բարեն կասի. «Իլանըն ճիրիմանթի, ալլահըն քյանրանմանթի, գիզմից էսա թակավորի ախչիկ մնա տղով»:

Թակավորի ախչիկ կթոնի կերթան, աղորթմանց կմնա տղով: Ին ամիս, ին օր ուր կթմի, թակավորու ախչիկ լաճմ կպիրի:

Թակավորն կասի. - Վա՛յ, իմ ախչիկ իմ գլլոխ իտիր խող, ըստա պան արաց:

Ուր վանգիրներաց կասի. - Ուր տղեն տվեք գլիրկ կայնցուցեք տոսան մեչ, խնձոր տվեք տղի ծեռ, ինչ կաննղոր մարթ կա կանչեք, տղեն ուր խնձոր վիր ուր կգանի, էն ի էնոր խեք:

Ինչ կաննղոր մարթ կա կկանչին, կընցնեն, մեչ մարթու տղեն ուր խնձոր չի գանի: Կասեն. - Էլ մարթ չմնաց, մեչ խատ սարի մեչ մարթմ կա, փոս փորի, քյաքյե մատե, ինե մարթ ուր մնացե՛ք էն ի:

Թակավոր կասի. - Կանցեք կանչեք:  
Կերթան Փոխի բարուն կասեն. - Փոխի բարա՛, արի քյե թակավոր կկանչի, էլի էրթումք:

Փոխի բարեն կասի. - Հալա՛, ճալա՛:  
Կասեն. - Չէլմի, պիտի գյնու էրթանք, կուգյան, կուգյան, չես իգյան՝ թակավոր քյո վիզ պիտի տալ գանեղ:

Փոխի բարեն կէլմի կերթան, կերթան խետ տոնեն ընցնելում տղեն խնձոր կգանի Փոխի բարուն:

Թակավոր կշիվարի կասի. - Էն իմ գլլեռիս դրեց խող, ախչիկն էլ տղեն էլ տվեք ծեռ՝ թո էրթան:

Ախչիկն ուր տղեն կգլրկի, կինի Փոխի բարու խետ կերթան:

Փոխի բարեն կերթան սար, կմտնի ուր քյաքյի փոսի մեչ: Ախչիկն էլ էնտեղ բեզիրմ կա խատուկ, ուր տղեն կատնի, կմտնի բեզիրի կողաշարի մեչ:

Թակավորու ախչիկ շատ կամութնա, լաճում կասի. - Կնա՛, Փոխի բարուն ասա, մենք անութի մեռանք: Մե խաց ճարի, մենք ուտենք:

Լաճն ի, կէլմի կերթան կասի. - Փոխի բարա՛, մենք անութի ենք, մե խաց ճարի, մենք ուտենք:

Փոխի բարեն կասի. - Հալա՛, ճալա՛, շուն շան որդին. «Իլանըն ճիրիմանթի ալլահըն քյանրանմանթի». էստտեղ սեղանմ պատրաստվի, թակավորու ախչիկ խաց ոտի:

Սեղան կպատրաստվի, թակավորու ախչիկ, ուր տղեն խաց կուտեն: Էնօրից սորա, օր էրկու դիր սեղան կպատրաստվի, թակավորու ախչիկ խաց կուտի:

Ավուր մեկ թակավորի ախչիկ լաճում կասի. - Կնա՛, Փոխի բարուն ասա՝ թո մե խամար քյեռչկմ շինի, մենք մտնենք ինե, մեք կողեր իրիցան արևու ճոնճ:

Լաճ կերթան կասի. - Աղա՛, մե քյեռչկմ շինի, մեք կողերն իրիցան արևու ճոնճ:

- Հալա՛, ճալա՛, - կասի, - շուն շան որդի, դե՛ կորի:

Թակավորու ախչիկն ի կքյմի:  
Փոխի բարեն կասի. - Իլանըն ճիրիմանթի, ալլահըն քյանրանմանթի, ըստեղ ըսկում քյոշկ սարեն շինվի, թակավորին չէլմի, սոզան կափլան վեր տոսան էլմի:

Թակավորու ախշիկ քյնուց կէլնի վեր, կտիսնա, որ ի՞նչ, քյեռշկ սարի մեշ պատկեր ի ըսկում սարե մի շինուկ, որ ուր խորն չկա, աւլամ կափլամ վեր տոամ կայնուկ ի:

Ավուր մեկ ախշիկ լաճում կճամխի մո խեր, կասի. - Ասա, Փոխի բաբա՛, մե խա ըսկում սեղամ մատրաստվի, որ թակավորու տում չկնտնվի. իմ խեր ես կպիրեմ դնվննթ:

Տղեն կերթն խորն կասի. - Փոխի բաբա՛, իմ մեր կասի, ըսկում սեղամ մատրաստի, որ թակավորու տում չկնտնվի, իմ խեր ես կպիրեմ դնվննթ:

Կտառնու կասի. - Իլանըն հիրիմննթի, ալլահըն քյնրննննթի, մե հատ ըսկում սեղամ մատրաստվի, որ թակավորու տում չէլնի:

Սեղամ կպատրաստվի. թակավորու ախշիկ մարթ կճամխի ուր խոր իտե, կկանչի դնվննթ:

Թակավոր կէլնի քիչմ ալլուր, եղ, պնն, պեռ բնրխանա կպնոնա, կասի՝ տանեմ իմ ախշկամ, մկա անուրթի ի, ծարավ ի:

Կտոնի թակավոր կուզն կտիսնա, որ ի՞նչ, քյեռշկ սարեմ աւլամ կափլամ վեր տոամ, կասի. - Ես՝ կասի, իմ ախշիկ մեռեր ի, փա՛ռք աստծու:

Թակավորն ի կուզնն գյեռ կնստին վեր ուրենց սեղնին, կուտեն, խմեն, ոսկի թաս վեր սեղնին կէլնի:

Ախշիկ լաճում կասի. - Կնա խորդ ասա, ըսկում դիլննքյմ արսու, որ ոսկի թաս մտնի թակավորու ծոց:

Տղեն կննց խորն ասաց. - Փոխի բաբա, ըսկում դիլննքյմ՝ արսա, որ ոսկի թաս մտնի թակավորու ծոց:

Փոխի բաբեն կասի. - Հալա՛, հալա՛, կորի:

Լաճ կթողնի կուզնն:

Փոխի բաբեն կասի. - Իլանըն հիրիմննթի, ալլահըն քյնրննննթի, ոսկե թասն մտնի թակավորի ծոց:

Խացի վերեն, որ ճյուր կխմեն ոսկի թաս կմտնի թակավորու ծոց: Խացի վերեն կփտոնեն, կփտոնեն, թաս ի՞նչխ էլավ, թաս ի՞նչխ էլավ: Թաս չկա:

Ախշիկն ի, կուզն կասի. - Թակավոր ապրած կենա՛ մե հատ ծեռ տուր քյո ծոց, աչքի:

- Ախշիկ, տյու ծոհ՞ր ես, տյու խե՛նթ ես, ես թաս կտոնեմ, կտանեմ իմ ծո՛ց:

Կասի. - Ես ի՞նչ կիտեմ, բայքյի էլնի:

Թակավորն ի, ծեռ կթնլի ծոց, ծոցեն թաս կխննի տյուս:

Ախշիկն ի, կասի. - Հնն տեսա՞ր: Տյու ի՞նչխ որ էտա թասից խննքնրմ չունիր, ես էլ իմ տողլ էլնեռուց, էսա տողից խննքնր չունեմ, էսա մարթու մոտ ըսֆա մնրիֆաթ կա:

Կերթնն Փոխի բաբում փոսից կխանեն տյուս կասեն. - Բլեկ՛, թակավոր քյե կկանչի:

Փոխի բաբին կտոնեն, կտանեն համամ, կլվնն կսերսիեն, թածա խալավ կխագյուցեն:

Փոխի բաբեն կասի. - Իլանըն հիրիմննթի, ալլահըն քյնրննննթի, ես էլնեմ քսամ տարեկամ ջիե:

Է՛ն կնխին Փոխի բաբեն կէլնի քսամ տարեկամ ջիե:

Նոր յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն, Փոխի բաբեն թակավորու ախշկամ կտոնի. մոր կէլնեն իրիլ կնիկ, կխասանեն ուրենց մուրազին:

Երկունց իրեք խնձոր հնգննվ, մեկն՝ ասողին, մեկն՝ լսողին, մեկն էլ շաղամաթին: